

Նկարագրված

Պ. ԿԱՐԱՆՅԱՆ

ՀԱՂԱՐՋԻ ՄՇԱԿՄԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

634.79

15313

4-219

Կարաէլյան, Պ.

արքի ճշակման արք.

Լ. 504

634.721

4-212

Պ. ԿԱՐԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք

ՀԱՂԱՐՋԻ ՄՇԱԿՄԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՈՒՄՆԵՐ

15313

18674



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԵՐԵՎԱՆ

1949

И. КАРАНЯН
Агроуказания по обработке
смородины
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

ՀԱՏԱՊՅՈՒՂՆԵՐԻ ՏՆԿԱՐԱՆ

Հատապատուղների տնկարանի հիմնական աշխատանքները թը-
փերի բաղմացնելն է: Մեծ քանակությամբ որակյալ տնկանյութ
աճեցնելը պահանջում է աշխատանքի կազմակերպվածություն և
ազրոձեռնարկումների ճիշտ կիրառում:

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂԱՐՋԻ ՏՆԿԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Տնկարանի տեղի ընտրությունը

Հաղարջը, համեմատած մյուս հատապատուղների հետ, ավելի
քիչ պահանջկոտ է դեպի հողը և ջերմության պայմանները: Սա-
կայն տնկարանի հողամասը պետք է լինի օրգանական նյութերով
հարուստ և ջրովի: Այս նպատակի համար համապատասխան են
բանջարանոցային հողերը: Հաղարջի տնկարանի հողամասը պետք
է լինի հարթ, կարելի է ընտրել և թույլ թեքություն ունեցող հո-
ղամասեր (միայն սրանք պետք է դասավորված լինեն թեքության
ստորին մասերում): Ստորերկրյա ջրերի մոտիկությունը հաղարջի
աճեցողության վրա ազդում են բացասաբար և այն հողամասերը,
որոնց ստորերկրյա ջրերը մոտ են, տնկարանի համար պիտանի
չեն:

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Հաղարջի տնկարանը պետք է ունենա իր հիմնական ճանա-
պարհը, որն անցնելու է հողամասի կենտրոնից և միացնելու է
մյուս հողակտորները՝ երկրորդական ճանապարհներով: Եթե որևէ
մասում կան ճահճացած հողակտորներ, անհրաժեշտ է նրանց շո-
բացման ենթարկել (դրենաժի) ստորերկրյա կամ սովորական խո-
րը (0,8 մետր խորությամբ) առուններ անցկացնելու միջոցով:
Տնկարանին հատկացված հողամասը բաժանում են 1—2 հեկտար

տարածութեան կվարտալների, որոնց երկարութիւնը պետք է լինի 100 մետր, իսկ լայնութիւնը՝ 100—200 մետր: Կվարտալներն իրենց հերթին բաժանում են 8 մետր լայնութեան ժապավենների (ջրելու հարմարութիւնների համար): Կվարտալները իրարից անջատվում են մեկից մեկ ու կես մետր լայնութիւն ունեցող ճանապարհներով, որոնց կողքերով անցնում են ներքին ջրատար առուները: Տնկարանը պետք է պաշտպանել իշխող—ուժեղ քամիներից: Տնկարանը հիմնելուց 1—2 տարի առաջ՝ իշխող քամիների հակառակ ուղղութեամբ տնկում են քամապաշտպան ծառաշերտեր, որոնք Հայաստանի լեռնային շրջանների համար սահմանված են 5—7 շարքից: Ծառերը տնկում են մեկը մյուսից 1,5—2 մետր հեռավորութեան վրա: Քամապաշտպան շերտի համար տնկում են բարդենի, դարաղաշ, հացենի, թղկի, կաղնի, վալրի խնձորենի, տանձենի, ալիշա և այլ ծառատեսակներ: Հատապտուղներից պետք է օգտագործել (որպես թփուտներ) կրոնդալի այլատեսակները: Վալրի թփուտներից՝ շիշխանը, մասուրը, դեղին ակացիան: Թփուտները տնկում են քամապաշտպան շերտի մէջ՝ ծառերի հետ խառը:

ՏՆԿԱՐԱՆԻ ԴԱՇՏԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հաղարջի տնկարանը կազմված է 3 դաշտից:

1. Մայրակի դաշտ, որտեղ աճեցվում են հաղարջի թփերը՝ կտրոններ վերցնելու համար:

2. Մայրակի դաշտ, որտեղ բազմացումը կատարում են հորիզոնական և ուղղահայաց շվերով:

3. Կտրոնների դաշտ, որտեղ արմատակալեցնում են տնկված կտրոնները:

ա) Մայրակի դաշտը՝ կտրոններ վերցնելու համար. — Արատարածութիւնը պետք է լինի այնքան, որ ապահովվի տնկարանի ամեն տարվա կտրոնների պահանջը: Օրինակի համար, մեկ հեկտար կտրոնների դաշտի համար պահանջվում է 40 հազար կտրոն: Ամեն տարի 4—5 տարեկան մայրակը կարող է տալ 100 հազար կտրոն: Ուրեմն, մեկ հեկտար մայրակը յուրաքանչյուր տարի ապահովում է երկուս ու կես հեկտար տարածութիւն կտրոններով: Այստեղից էլ պետք է կատարել հաշվումներ՝ թե ո՞րքան տարա-

ծությամբ մայրակի դաշտ պետք է ունենալ՝ կտրոնների պահանջն ապահովելու համար:

բ) Մայրակի դաշտ.— Այս դաշտում տնկում են մայրակներ՝ հորիզոնական շվերից արմատակալած թփեր ստանալու համար:

Այս ձևով բազմացնելիս մեկ հեկտար տարածության վրա տնկում են 2500 հատ թուփ: Ուղղահայաց շվերով բազմացնելիս՝ մայրակի դաշտում տնկում են 2000—4000 թուփ:

գ) Կտրոնների դաշտ.— Այս դաշտում տնկում են շվերից վերցված կտրոններ՝ գարնանը կամ աշնանը արմատակալեցման համար: Մեկ հեկտարի վրա տնկում են 40 հազար կտրոն:

ՏՆԿԱՐԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՏՆԿՄԱՆ ՀՄԱՄԱՐ

Հատապտուղների տնկարանի հողամասը վարում են ամռանը՝ աշնան տնկումների համար, և աշնանը՝ հաջորդ տարվա գարնան տնկումների համար: Վարը կատարում են 25—35 սանտիմետր խորության վրա, նախապես հողը պարարտացնելով փտած գոմաղբով կամ խառնաղբով (մեկ հեկտար հողի մեջ մտցնելով 40—60 տոննա):

Հողամասը գարնանը լրացուցիչ կերպով պարարտացնում են հանքային պարարտանյութերով՝ N—60—80 կիլոգրամի, K—80 կիլոգրամի և P₂O₅—100 կիլոգրամի հաշվով (Միշուրինի անվան Պտղաբուծական ինստիտուտի տվյալների համաձայն):

Նախքան տնկումների սկսելը՝ հողամասը հարթում են և բաժանում ժապավենների՝ հաշվի առնելով ջրելու հարմարությունները:

Մայրակների տնկելը և խնամքը.— Մայրակների կվարտաններում թփերը տնկում են շարքը-շարքից երկու մետր, բույսը-բույսից մեկից մեկ ու կես մետր հեռավորության վրա:

Այնպիսի սորտեր, որոնց աճեցողությունն ավելի ուժեղ է, ինչպիսիք են «Կրոնդալ» և «Լիա— Պլոդորոդնայա» տնկում են բույսը-բույսից մեկ ու կեսից—երկու մետր հեռավորության վրա:

Այս հաշվով՝ մեկ հեկտարի մեջ տեղավորվում է 2500—3333 թուփ:

Տնկումները կատարում են ուշ աշնանը, տերևաթափի շրջանում, իսկ վաղ գարնանը՝ տնկում են նախքան բողբոջների բացվելը: Հողամասը տեղաձևում են 3 լարի միջոցով, որոնց վրա նա-

խապես գունավոր ներկով նշումներ է արված՝ միջշարքային և միջթիային տարածությունների տեղերը: Լարերից երկուսը, որոնք ցույց են տալիս շարքերի լայնության չափը, ձգում են կվարտալի երկարությամբ, իրար զուգահեռ. երրորդ լարը առաջի երկու լարերի ուղղահայաց ուղղությամբ տեղափոխում ու ձգում են այնպես, որ աշխատողը լարի վրա նշված տեղերում կարողանա խփել ցցեր՝ որտեղ տնկվելու են թփերը:

Ցցերով նշված տեղերում փորում են 40 սմ խորության և 40—45 սմ լայնության փոսեր:

Տնկումը կատարում են 6 բանվորից կազմված օղակով, որոնցից երկուսը պատրաստում են փոսերը, երկուսը տնկում են, մեկը մտնեցնում և բաշխում է թփերը, իսկ 6-րդ բանվորը շրում է տնկած թփերը:

Տնկելու ընթացքում բույսերի արմատները պետք է պահպանել շորացումներից: Թուփը փոսի մեջ դնում են 8—10 սանտիմետրով ավելի խորը, քան նա գտնվում էր տնկարանում աճելու ժամանակ: Փոսի մեջ հողը լցնելուց հետո՝ պնդացնում են ոտքերով տրորելով:

Տնկելուց հետո՝ թփերի շվերը հեռացնում են, թողնելով միայն 10—15 սանտիմետր բարձրության 3—4 հատ բութակ, որոնք իրենց վրա ունեն 1—4 աչք: Առաջին տարում՝ նոր տնկված թփերի խնամքը կայանում է ջրելու և փխրեցնելու մեջ: Սա կատարվում է գարնանից՝ 8—10 անգամ:

Գարնանը՝ ջրելու ժամանակ թփերին տրվում է նաև լրացուցիչ սնուցում, մեկ հեկտարին 40 կիլոգրամ ազոտի հաշվով: Պարարտանյութերը ցրում են դաշտում, նախքան ջրելն սկսելը:

Կտրոններ ստանալու նպատակով տնկված մաշրակների էտումը տարբերվում է պտղաբերման համար տնկված թփերի էտումից: Կտրոնների ստացման համար եղած մաշրակի վերաբերյալ աշխատանքների նպատակն է ըստ հնարավորին շիվերի քանակը շատացնել, որին կարելի է հասնել թփերի առատ պարարտացմամբ և ուժեղ էտումով: Առաջին տարում տնկված թփերն ուժեղ էտում են թողնելով թփի մեջ 15—20 սանտիմետր բարձրության բութակներ՝ 2—3 աչքի վրա:

Նույն աշնանը թփի վրայից հեռացնում են նվազ աճեցողության ունեցող շվերը, թողնելով 3—5 շիվ:

Երկրորդ տարին՝ վաղ գարնանը, բողբոջները բացվելուց առաջ, եղած շվերն էտում են 2—3 աչքի վրա:

Այդ գարնան ընթացքում թփի միջից առաջանում են 12—14 նոր և ուժեղ աճեցողութուն ունեցող շվեր, որոնք նույն աշնանն էտում են կտրոններ պատրաստելու համար:

Աշնանը շվերը կտրելիս՝ թփի վրա թողնում են 3—5 միամյա փոխարինող շվեր, որոնց թփի վրա պահպանում են 2—3 տարի: Այս ճյուղերը թփի կենսունակութունը բարձրացնելու համար են: Այսպիսով, էտումը կատարվում է այն հաշվով, որ թփի մեջ միշտ գոյութուն ունենան 3—5 հատ մեկ տարեկան ուժեղ շվեր:

Բոլոր թույլ աճեցողութուն ունեցող միամյա շվերը հեռացնում են, քանի որ սրանք կտրոնների համար պիտանի չեն և թփի վրա ավելորդ ստվեր են առաջացնում, անտեղի սննդանյութեր են ծախսում և դրանցով իսկ խանգարում մնացած շվերի նորմալ զարգացմանը:

Մայրակների մշակման երրորդ տարում՝ մեկ հեկտարից կտրում են մոտ 30 հազար հատ շիվ, որից պատրաստում են 20—25 սանտիմետր երկարությամբ կտրոններ (թվով մոտ 60—70 հազար հատ):

Մայրակի աճման 4-րդ, 5-րդ տարիներին մեկ թփից կտրում են մինչև 30 հատ շիվ, որը մեկ հեկտարի հաշվով կազմում է մոտ 100 հազար: Սրանցից ստացվում են մոտ 200 հազար հատ 20—25 սանտիմետր երկարությամբ շվեր:

ԲԱԶՄԱՅՈՒՄ՝ ԹՓԵՐԻ ԲՈՒՎԼԻՅԻ ՄԻՋՈՅՈՎ


Այս ձևի բազմացման համար տնկված թփերի խնամքը նույն ձևով է ընթանում, ինչպես այդ կատարվում է կտրոնների մայրակի համար:

Երրորդ տարին՝ վաղ գարնանը, թփի մեջ եղած բոլոր շվերը կտրում են հողի մակերեսին հավասար:

Թփից առաջացած նոր, դալար շվերը հունիս ամսի կեսերին, երբ նրանք 15—20 սանտիմետր բարձրության են հասնում, կատարում են առաջին բուկլիցը: Բուկ տալու ժամանակ հետևում են, որ հողը լինի խոնավ և կոշտերից զերծ: Առաջին բուկլիցը կա-

տարում են 10 սանտիմետր բարձրության վրա, որից հետո հողամասը ջրում են (տես նկար 1):

Երկրորդ բուկլիցը կատարում են 20—25 օրից հետո: Անցած



Նկ. 1

Բազմացումը թփերի բուկլիցի միջոցով: ջրել:

այդ ժամանակամիջոցում՝ շվերը բավականին աճում են և հնարավոր է լրացուցիչ բուկլիցով հողը բարձրացնել մինչև 20—25 սանտիմետրի:

Երկրորդ բուկլիցից հետո՝ հողամասը նորից ջրում են: Եղած ջերմությունը, խոնավությունը և օդի ներկայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում շվերի արմատակալման համար, այդ պատճառով էլ գարնան ընթացքում պետք է 6—8 անգամ մայրակի դաշտը փխրեցնել և ջրել:

Աշնանը՝ տերևաթափին, թփերի շուրջը հավաքված հողը հեռացնում են, զգուշանալով արմատները վնասելուց, սուր դանակով կամ մկրատով կտրում են արմատակալած շվերը: Սրանցից թույլ արմատակալածները տնկում են առանձին հողակտորում՝ ուժեղ արմատական ցանց առաջացնելու համար:


Լավ արմատական ցանց ունեցող թփերը բաց են թողնում հիմնական տնկարկներում տնկելու համար:

Մայրակ թփերը, որոնցից կտրել են արմատակալած շվերը, ցրտահարությունից պաշտպանելու համար՝ նախքան աշնան-ձյան ցրտերի վրա հասնելը ծածկում են հողի հաստ շերտով (20—30 սանտիմետր):

Այս ձևի բազմացումով ամեն մի թփից ստացվում է 25—30 հատ արմատակալած շիվ, որը մեկ հեկտար մայրակի համար կազմում է 60—75 հազար հատ:

ԲԱԶՄԱՅՈՒՄ՝ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՇՎԵՐՈՎ

Բազմացման այս ձևը տալիս է մեծ քանակությամբ արմատակալած շվեր: Այս ձևի բազմացման ժամանակ մայրակը տրնկում են ավելի խիտ՝ թուփը-թփից մեկ մետր, շարքը-շարքից մեկ և կես մետր հեռավորությամբ, այսպիսով մեկ հեկտարի վրա տեղավորվում է 6666 հատ թուփ: Մայրակի տնկման և խնամքի ձևվերը՝ առաջի երկու տարվա համար նույնն են և շեն տարբերված նախորդ գլխում նկարագրածից: Աճեցման 3-րդ տարում, գարնանը՝ թփի վրայից ընտրում են ամենալավ աճեցողության 4 հատ շիվ: Ընտրությունը կատարում են եզրի շվերից: Ընտրված շվերք կոացնում են և կարթերի օգնությամբ ամրացնում հողին (ակոսների մեջ): Կոացված շվերը ծածկում են 2—3 սանտիմետր հաստությամբ պարարտ հողով, կամ փտած գոմաղբի և հողի խառնուրդով (տես նկար 2):



Նկ. 2

Բազմացումը եռիզոնակաև շվերով:

Կոացած շվերի բողբոջներից առաջացած կանաչ շվերը, երբ նրանք հասնում են 10—15 սանտիմետր բարձրության, բույլ են տալիս՝ նախապես խոնավացրած հողով (2—3 օր առաջ ջրած հողով):

Երբ շվերը հասնում են 20—25 սանտիմետր բարձրության, բույ տալը կրկնում են: Մայրակների միջշարքային տարածու-
թյունը կարելի է մշակել նաև ձիու կուլտիվատորով: Մինչև ամ-
ռան վերջը առաջանում են լավ արմատական ցանցով 40—50
սանտիմետր բարձրության շվեր: Աշնանը՝ տերևաթափին սկսվե-
լուց, մայրակների թփերի բույ տված հողը հեռացնում են: Հորի-
զոնական շվերի վրա առաջացած արմատակալած շվերը կտրում
են այնպես, որ անջատված շիվն ունենա լավ արմատական ցանց:
Ուժեղ աճեցողություն ունեցող շվերը բաց են թողնում որպես
տնկանյութ՝ հիմնական տնկարկներում տնկելու համար, իսկ
ավելի թույլերը տնկարանում մեկ տարի կա պահպանում են լավ
արմատակալելու համար: Մայրակի հետագա մշակումը շարու-
նակիում է արդեն նկարագրված ձևով: Ամեն տարի գործի են
դրվում թփի վրա առանձնացված միամյա 4 շվերը:

ԲԱԶՄԱՑՈՒՄ՝ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

Կտրոնների կաման ժամկետները

Աշնան տնկումների համար թփերից կտրոններ վերցնում են
աշնանը: Վաղ գարնան տնկումների համար՝ կտրոնները վերցնում
են աշնան և ձմռան ընթացքում: Տնկելու համար վերցվող կտրոն-
ների երկարությունը պետք է լինի 18—20 սանտիմետր: Կտրելուց
հետո կտրոնները խրճերով կապում են (յուրաքանչյուրի մեջ 100
կտրոն):

Կտրոնները կտրում են դանակով: Մկրատով կտրելու դեպ-
քում կտրոնների ծայրի հյուսվածքները՝ պահելու ընթացքում ա-
վելի շուտ են նեխման ենթարկվում: Կտրոնները պահվում են սա-
ռը նկուղում (0°—3° Ց. ջերմության պայմաններում): Կտրոնների
խրճերը ծածկում են 5—10 սանտիմետր հաստության ալազի շեր-
տով՝ վրան ավելացնելով 20—25 սանտիմետր հաստության ձյան
շերտ: Գարնան սկզբին, ձյունը հալչելուց պահպանելու համար,
ձյան շերտի վրա փռում են 20 սանտիմետր հաստության ծղոտի
շերտ: Այսպիսի ձևով պահպանված կտրոնները՝ նախքան տնկե-
լը—չեն արթնանում, որով և պայմաններ են ստեղծվում արմատա-
կալման քարձր տոկոս ստանալու համար:

Բ. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՆԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՉԵՎԵՐԸ

Կտրոնները վերցվում են ապրոքացված հիմնական տնտեսական թիվերից և տնկում են վաղ գարնանը և աշնանը: Աշնան տրեկումների լավագույն ժամկետն է սեպտեմբեր ամսի 2-րդ տասօրյակից մինչև նոյեմբեր ամսի 1-ին տասօրյակը: Այս ժամկետում տնկված կտրոնները արմատակալում են 72—88 տոկոսով:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պտղաբուծական ինստիտուտի լեռնային սեկտորի (Լենինական) տվյալների համաձայն, աշնան տնկումների լավագույն ժամկետը՝ Լենինականի համար հանդիսանում է հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 10-ը: Մոսկվայի պտղա-հատապտղային փորձակայանի տրվյալների համաձայն՝ գարնան տնկումները պետք է կատարվեն մինչև բողբոջների արթնանալը: Արթնացած բողբոջներով տնկված կտրոնների անկումը շատ մեծ է, որովհետև կտրոնների զգալի մասը շորանում է այն պատճառով, որ նրանց վրա դեռ արմատներ չկազմակերպված՝ բացված բողբոջներից առաջացած վերերկրյա մասի գոլորշացմամբ ուժեղ կերպով խոնավություն է ծախսում և բույսը ջրազրկվում է:

Գ. ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՆԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Կտրոնների տնկման հողամասը պարարտացվում է ավելի ուժեղ, քան այդ արվում է մայրակների հողամասի համար: Հեկտարին արվում է ոչ պակաս 60 տոննա գոմաղբ, կամ նույն քանակությամբ խառնաղբ: Ի. Վ. Միշուրինի անվան Պտղաբուծական ինստիտուտի տվյալների համաձայն՝ հանքային պարարտանյութերից կարելի է տալ սուպերֆոսֆատ, ամոնյակային սելիտրա և կալցումական աղ: Բույսերի կողմից լավ յուրացվելու համար՝ սուպերֆոսֆատով պարարտացումը կատարում են աշնանը՝ մեկ հեկտարին տալով 100 կիլոգրամ P_2O_5 -ի հաշվով: Մյուս հանքային պարարտանյութերը՝ ամոնյակային սելիտրան, կալցումական աղը, մտցնում են հողի մեջ տնկման աշխատանքների նախօրյակին, մեկ հեկտարի համար վերցնելով 60—80 կիլոգրամ N-ի և 80 կիլոգրամ K_2O -ի հաշվով:

Կտրոնները տնկում են 20—25 սանտիմետր խորությամբ:

համատարած վարված հողամասի վրա: Միջշարքային տարածու-
թյունները վերցնում են 60 սանտիմետր, տնկում են մեկը-մյուսից
10 սանտիմետր հեռավորության վրա՝ մետաղյա լարի, կամ պա-
րանի օգնությամբ, որի վրա նախապես նշված են տնկվող կտրոն-
ների հեռավորությունները:

Լարը ձգում են շարքի երկարությամբ. լարի վրա նշված տե-
ղերում՝ մետաղյա ցցերի օգնությամբ (մետաղյա ցիցը միջին
մասում պետք է ունենա մեկ և կես սանտիմետր հաստություն,
50 սանտիմետր երկարություն, մեկ ծայրը սուր կոնաձև, իսկ
մյուսը՝ ձեռքի բռնատեղի հարմարանքով) աշխատողը հողի մեջ
14—16 սանտիմետր խորությամբ անցք է բաց անում, որի մեջ
դնում են կտրոնը: Հողի մասնիկները կտրոնին ընդհուպ մոտեց-
նելու համար՝ տնկված կտրոնից 3—5 սանտիմետր հեռավորու-
թյան վրա նույն ցիցը հողի մեջ խփելով— այն սեղմում են դեպի
տնկված կտրոնը: Կտրոնները տնկելուց հետո՝ միջշարքային տա-
րածությունը ծածկում են 5—7 սանտիմետր հաստությամբ խառ-
նադրի կամ փտած գոմաղբի շերտով (մուշապատում):

Տնկող օղակը կազմված է լինում 5 աշխատողից, որից եր-
կուսը երկաթե ցցերով անցքեր են պատրաստում, երկուսը կտրոն-
ները տեղափորում անցքերի մեջ և շուրջը ռաքերով պնդացնում,
իսկ 5-րդը՝ տնկված կտրոնների բուկը լցնում և ջրում է: Տնկման
ընթացքում մեկ աշխատողին 8 ժամվա ընթացքում ընկնում է
1000 կտրոն՝ հաշվելով նաև բուկլիցն ու ջրելը: Մեկ հեկտարի
վրա տնկում են 40—45 հազար կտրոն:

Գարնանից կտրոնների դաշտը 8—10 անգամ փրի-
րեցնում և ջրում են: Զրման և փխրեցման աշխատանքներից ա-
ռաջ՝ որպես սնուցում միջշարքային տարածություններն են մրա-
ցրնում ամոնյակային սելիտրա (մեկ հեկտարին ամբողջ ամառ-
վա ընթացքում տալով 40 կիլոգրամ ազոտ): Ճիշտ և ժամանակի-
կիրառված խնամքն ապահովում է ստանդարտ թփերի ելույթի
բարձր տոկոսը: Ստանդարտ թփեր են հաշվում 2—3 հատ՝ 40—60
սանտիմետր երկարության շվեր և 20 սանտիմետրից ոչ պակաս
արմատներ ունեցողները:

Այն շվերը, որոնք չեն համապատասխանում սահմանված ա-
ճեցողության չափերին (ստանդարտին), թողնում են հողամասում՝
Էրկրորդ տարին լրացուցիչ աճեցման համար: Սրանցից առաջա-

ցած շվերը գարնանն կտում են 2—3 բողբոջի վրա (հողի մակե-
րեսից 2—5 սանտիմետր բարձրությամբ): Մինչև աշուն՝ սրանցից
ձևավորվում են երկու տարեկան ուժեղ թփեր, որոնք պիտանի են
չինում հիմնական տնկարկներում տնկելու համար:

Դ. ԱՐՄԱՏԱԿԱԼԱՅ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՆՆԷԸ, ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼԸ ԵՎ ՊԱՀԵԼԸ

Արմատակալված կտրոնները հանում են բահով կամ վայրակ
հանող գութանով: Բահով հանելիս՝ կտրոնների շարքերին կից
փորում են 30—40 սանտիմետր խորությամբ առվակ: Թփերը շար-
քի հակառակ կողմից կտրում, գցում են առվակի մեջ: Մի այլ
աշխատող՝ հանված թփերը հավաքում, տեսակավորում և խուրձեր
է կապում (չուրաքանչյուրում հարյուր հատ): Հանելու աշխա-
տանքների ընթացքում՝ թփերը շորացումներից պաշտպանելու
համար պետք է պահել ծածկոցների տակ կամ ժամանակավորա-
պես ծածկել հողով: Չեռքի գործիքներով հանելիս՝ մեկ աշխատո-
ղը կարող է հանել և տեսակավորել մոտ 1000 թուփ:

ԹՓԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Առաջին և երկրորդ կարգի թփեր են համարվում՝ 40—60
սանտիմետր երկարությամբ 2—3 շվով, լավ արմատական ցանց
ունեցող թփերը. 3-րդ կարգի թփեր են համարվում նրանք, որոնց
շվերի երկարությունը 30 սանտիմետրից պակաս է և արմատական
ցանցը թերազարգացած: Սրանց կամ թողնում են տնկարանում,
կամ տեսակավորումից հետո տնկարանում նորից տնկում են,
թփերի ուժեղացման և արմատական ցանցը լավացնելու համար:
Տեղափոխումների համար թփերը հակավորում են: Եթե տեղափո-
խումները կատարվելու են հետո տարածությունների վրա, ապա
անհրաժեշտ է թփերի արմատները փաթաթել ախտահանված, խո-
նավացրած մամուռով, որից հետո փակել ճլուպից պատրաստած
պարկերի մեջ: Մեկ հակի մեջ տեղավորում են 300—400 թուփ:
100-ականերով կապած խրձերի վրա կապում են պիտակներ, որոնց
վրա գրվում է տեսակի անունը, քանակը և ուղարկվող ու ստա-
ցող հիմնարկների հասցեները: Այն թփերը, որոնք ձմեռը պահվե-
լու են դաշտում, նրանց համար ընտրում են սովերոտ, հյուսի-
սային թերություն ունեցող գարնանային ջրերի կուտակումներից

զերծ մի տեղ: Նշանակված տեղում պատրաստում են 30—40 սանտիմետր խորությամբ, 50 սանտիմետր լայնությամբ և թփերի քանակությանը համապատասխանող առուններ, որոնց մեջ դասավորում են հանած թփերը: Առաջին շարքը դասավորելուց հետո ծածկում են այն 30—40 սանտիմետր հաստություն ունեցող հողաշերտով: Նույն կարգով դարսում և ծածկում են նաև մնացած թփերը:

Վաղ դարնանը, նախքան եղանակների տաքանալը, որպեսզի բողբոջները նախքան դաշտ տեղափոխելը ժամանակից շուտ չբացվեն, անհրաժեշտ է այն մասում, որտեղ թաղված են թփերը 0,3—0,4 մետր հաստությամբ ձյուն կուտակել՝ ծածկելով 15—20 սանտիմետր ծղոտի շերտով: Այս ձեռնարկումը 20—30 օրով հետաձգում է թփերի բողբոջների բացվելը: Քանի որ հողարջի պրեթե բոլոր տեսակների բողբոջները դարնանը շուտ են բացվում, որը հետագայում բացասաբար է անդրադառնում թփերի կաշտղականության և աճեցողության վրա, ուստի տնկարաններում հողարջի տնկանշութի հանելն և իրացնելը պետք է ավարտել աշնանը:

ՏՆԿԱՆՅՈՒԹ ԲԱՅ ԹՈՂՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՐՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ

1. Բաց թողնվելիք թփերը պետք է ունենան հասունացած բնափայտ և ավարտված աճեցողություն:

2. Թփերը պետք է հանել լրիվ տերևաթափի շրջանում:

3. Յուրաքանչյուր հակի մեջ կապված տարրեր տեսակները պետք է ունենան իրենց սորտի անունը կրող պիտակներ: Պիտակի վրա բոլոր նշանակումները կատարում են սև մատիտով և ջրնջումներից կանխելու համար՝ պիտակը փաթաթում են պերգամենտի թղթով:

4. Գրվում է առանձին կարանտինային վկայական (սերտիֆիկատ)՝ Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության կողմից սահմանված ձևով:

ՍՈՐՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ

Մորառային վկայականի №

- 1) Բաց է թողնված (ուղարկող տնտեսության անունը)
- 2) Տնտեսության մանրամասն հասցեն (շրջան, գյուղ)
- 3) Մտակա երկաթուղային կայարանը
- 4) Տնկանյութը բաց է թողնվում (ս.մ)
- 5) Ստացողի հասցեն (շրջան, գյուղ)
- 6) Բաց թողման ժամանակը « . . » 194 . . թիվ

7) ՏԵԿԱՆՅՈՒԹԻ (ՏԵԿՐԵՆԻ) ՀԻՄՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻՑ՝

№	Տնկանյութի սեսակը և սորքը	Ի՞նչ պատ- վասակալ- ների վրա է պատվաս- ված	Տնկանյութի նաատակը	Բաց թողնված տնկանյութի սրակը և քանակը (հատերով)		
				1-ին կարգի	2-րդ կարգի	Ընդամենը

Տնկարանն առողջ է, մնասատուների և հիվանդությունների նշաններ չկան:

Տնտեսության դիրեկտոր՝
 կամ կոլխոզի նախագահ՝ (ստորագրություն)
 Ազրոնոմ կամ բրիգադիր՝ (ստորագրություն)

Ծանոթություն.— Վկայականը գրվում է երկու օրինակից, մեկը տրվում է ստացողին, իսկ մյուսը՝ պահվում է տնկարանի գործերում 5 տարի տևողությամբ:

ՀԱՂԱՐՁԻ ՏԵԿԱՐԿԻ (насаждение, плантация) ՀԻՄՆԵԼԸ

Հաղարջի պահանջը կլիմայի և հողի նկատմամբ

Սև և կարմիր հաղարջի տեսակները պահանջում են պարարտ, լավ մշակված, մշտապես խոնավությամբ ապահովված

հողամասեր: Այդպիսի հողամասերում մշակվող հաղարջի միջին բերքը մեկ հեկտարից կազմում է 6—8 տոննա, երբեմն հասնելով մինչև 15—17 տոննայի: Թե սև և թե կարմիր հաղարջներից ցրտադիմացկունությունը բարձր է. նույնիսկ 38 աստիճանի սառնամանիքի պայմաններում նրանք չեն ցրտահարվում: Ըստ Պավլովի աշխատության՝ (1937 թ. Սելխոզգիզ) հաղարջի միամյա շվերն անգամ ջերմության խիստ տատանումներից վնասվածքներ չեն ստանում: Որոշ տեսակների ծաղիկների ցրտադիմացկունությունը՝ ծաղկման շրջանում ևս շատ մեծ է. օրինակ՝ 8,8 աստիճան ցրտի պայմաններում սև հաղարջի՝ Ալավա Լենինգրադա և սպիտակ հաղարջի՝ Վերսալսկայա Բելայա տեսակների ծաղիկների կորուստը արտահայտվում է միայն 20 տոկոսով (տես այդ մասին վկայող սաև Լենինականի Պողոս-բանջարարուծական կայանի 1947 թ. հաշվեալությունը):

ՀԱՂԱՐՋԻ ՏՆԿԱՐԿԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաղարջի տնկարկին հատկացված հողամասը պարարտացվում է գոմաղրով (մեկ հեկտարին 40—60 տոննայի հաշվով): Գործածվող հանքային պարարտանյութերի դոզաները նույնն են, ինչ արդեն ասվել է մայրակների հողամասերի համար: Տնկարկի հողամասն ընտրում են հարթ տարածության վրա: Այս նպատակի համար պիտանի են նաև թեքությունների ստորին մասերը:

Անջրդի հողամասերում պտուղներն ստացվում են մանր, շուտ են թափվում, թիփ աճեցողությունը լինում է նվազ և նա շուտ է շարքից գուրն գալիս:

Ընտրված հողամասը բաժանում են կվարտալների՝ մեկ և կես-երկու հեկտար տարածությամբ: Կվարտալները մեկը-մյուսից անջատում են 3—4 մետր լայնությամբ ճանապարհներով, որով հեշտացվում է պարարտացման, բերքի փոխադրման և այլ աշխատանքները: Ճահճացած հողակտորները դրենաժի միջոցով շորացնում են, իսկ եղած քարերը հեռացնում մշակման ընթացքում:

ՀՈՂԱՄԱՍԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՏՆԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հողամասը, նախքան հատապտուղների տակ դնելը, երկու տարով զբաղեցնում են խոտաբույսերով և այնուհետև 30—35 սանտիմետր խորությամբ վարելով փոցխում են: Տեղաձևումը կա-

տարում են նույն ձևով, ինչպես նկարագրված է մաշրակների հո-
ղամասի վերաբերյալ:

Ուժեղ աճեցողություն ունեցող տեսակների համար միջշար-
քային տարածությունները վերցնում են երկու մետր (օրինակ
կրոնդալ սորաի համար), իսկ ավելի թույլ աճեցողություն ունե-
ցողների համար՝ մեկ և կես մետր: Միջբուսային տարածություն-
ներն առաջինի համար վերցնում են մեկ և կես մետր, իսկ երկ-
րորդների համար մեկ մետր: Այս հաշվով մեկ հեկտարի վրա
տնկում են 3333—6666 հատ թուփ: Ուժեղ աճեցողություն ունե-
ցող սև հաղարջների տեսակներին են պատկանում «Արա Պլուդո-
րոդնայա», «Մլավա Լենինգրադա», «Հակրոմալիս», կարմիր հա-
ղարջների տեսակներից՝ «Հոլանդական կարմիրը», «Կովկասյանը»,
միջակ աճեցողություն ունեցող հաղարջների տեսակներին են
պատկանում «Նուար-դիկսոնը», «Նովեյշայան», Հոլանդական
սպիտակը» և «Արշնովայան»:

ԹՓԵՐԻ ՏՆԿՄԱՆ ԵՎ ԷՏՄԱՆ ՉԵՎԵՐԸ


Թփերի տնկելը և նրանց մշակումը՝ աճեցողության առաջին
տարում տարվում է նույն ձևով, ինչ մաշրակներինը: Հաղարջի
արդյունաբերական տնկարկների թփերը էտում են հետևյալ ձևով,
տնկելուց հետո թփերն անմիջապես էտում են 5—10 սանտիմետր
բարձրության վրա, հեռացնելով բոլոր կտարված և թույլ աճեցո-
ղության շվերը: Թփի վրա փաստորեն մնում են 3—4 հատ 5—10
սանտիմետր բարձրության բուխակներ, որոնք իրենց վրա կրում
են 2—3 բողբոջ: Հաղարջի թփերի հետագա էտումը կատարում
են հաշվի առնելով, որ նրանք պտղաբերում են միամյա, երկամ-
յա և եռամյա բնափայտի վրա: Ավելի ծեղ հասակի բնափայտը
թփի վրայից հեռացվում է, քանի որ նրանց վրա առաջացած պը-
տուղները լինում են մանր և որակով ցածր: Առաջին տարվա վեր-
ջում թփի վրայից հեռացնում են բոլոր հասակի թույլ աճողու-
թյուն ունեցող և գեանի երեսը փռված ճյուղերը: Թփի վրա թող-
նում են 6—8 հատ լավ աճեցողություն ունեցող շվեր: Աճման
երկրորդ տարում՝ նոր աճած շվերից թողնում են 3—5 հատը,
մնացածները հեռացնում են: Աճման երրորդ տարում՝ նորից թող-
նում են առաջացած փոխարինող շվերից 3—5 հատը, հեռացնելով
3—4 հատ եռամյա (պտղաբերությունն ավարտած) շվերը:

15.313
18674



Այս ձևի էտումից աճման 4-րդ տարում թփերի վրա կլինեն 3—5 հատ միամյա, 3—5 հատ երկամյա, 3—5 հատ եռամյա շվեր:

Հետագա տարիներին՝ երեք տարեկանից ավելի բնափայտ ունեցող շվերը թփի վրայից հեռացնում են՝ ամեն տարի թողնելով թփի վրա որպես փոխարինող 3—5 հատ միամյա շվեր, որոնք թփի վրա պետք է լինեն մեկը մյուսից հավասար հեռավորությամբ: Մյուսն ց աճի մեկ երրորդ մասը կտրում են վաղ դարձանը, նախքան բողբոջների բացվելը: Բացի այդ, թփի մեջ եղած 2—3 տարեկան շվերի ծալրամասի ճյուղերն էտում են 3—5 աչքի վրա և ամեն տարի վաղ դարձանը, թփի վրայից հեռացնում բոլոր շորայած, կտրված ճյուղերը (տես նկար 3):



Նկ. 3

Հաղարջի թփի էտումը

I. Մեկ տարեկան թփի էտումը: II. Երեք տարեկան թփի էտումը:
 Ա. 2—3 տարեկան շվերի էտումը: Բ. 1 տարեկան շվերի էտումը: Գ. սովորապես առաջացնող և բույլ առնող ճյուղերի էտումը:

Կարմիր և սպիտակ հաղարջի էտումը չի տարբերվում սև հաղարջի էտման ձևից: Միայն հաշվի առնելով կարմիր հաղարջի պտղաբերման բիոլոգիական առանձնահատկությունները, էտման ժամանակ հեռացվում են 7 տարեկանից բարձր հասակ ունեցող ճյուղերը, քանի որ այս տեսակի հաղարջի պտղաբերությունը նույն ճյուղի վրա շարունակվում է մինչև 7 տարեկան հասակը:

ՀԱՂԱՐՋԻ ԹՓԵՐԻ ԷՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Էտումը կատարում են վաղ գարնանը կամ աշնանը: Գարնան էտումն սկսում են նախքան բողբոջների արթնանալը: Աշնանը՝ կատարում են տերևաթափի ընթացքում: Աշնան էտման առավել յությունը — ժամանակի անսահմանափակությունն է: Գարնան էտումը կատարում են շատ սեղմ ժամկետներում, բայց սրա առավելությունն էլ այն է, որ թողած ճյուղերի կոտրվելու վտանգը քիչ է, մինչդեռ աշնան էտված ճյուղերը՝ ձմռան ընթացքում կարող են կոտրվել և ստիպված գարնանը էտման աշխատանքները պետք է կրկնել. էտված բոլոր ճյուղերը դաշտից հեռացնում և այրում են:

Մերացած թփերը կարելի է երիտասարդացնել՝ ուժեղ էտման միջոցով: Այս ձևով կարելի է վերականգնել թփերի պտղաբերությունը և մի քանի տարով երկարացնել նրանց կյանքը:

Մերացած թփերի երիտասարդացման համար՝ թփերի շրջապատը և միջշարքային տարածությունները խորը փորելով բազմամյա մոլախոտերը արմատախիչ են անում: Թփերի ուժեղ աճն ապահովելու համար հողամասը փտած գոմաղբով կամ խառնաղբով պարարտացնում են՝ նույն քանակությամբ, ինչ մայրակների և տնկարկների համար. թփի վրայից էտված շվերը (թե երիտասարդները և թե ծերացածները) դաշտից հեռացնում են որպեսզի վնասատուների ձվերը և հարսնյակները, կամ հիվանդություն առաջացնող սրնկերը հեռացվեն դաշտից: Էտված թփերից՝ գարնանը զարգանում են բազմաթիվ քանակությամբ միամյա շվեր (60—70 հատ), որոնք նույն տարվա հուլիս ամսի 2-րդ տասնօրյակում՝ հեռացնում են թողնելով միայն 6—8 հատ, որոնք հետագայում երիտասարդացված թփերի ձևավորման համար ծառայելու են որպես հիմնական շվեր: Ձևավորման հետագա աշխատանքները կատարում են նույն ձևով ինչ նկարագրված է նախորդ գլխում:

ՀԱՂԱՐՋԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Երկար ճանապարհների տեղափոխումների համար, կարմիր և սև հաղարջը պետք է հավաքել ոչ լրիվ հասունացած վիճակում: Կարմիր հաղարջը հավաքում են հասունացման վարդագույն շրջանում և ողկույզներով (այդ վիճակում նա ավելի դիմացկուն է):

Սև հաղարջը հավաքում են, երբ առաջին 1—2 պտուղները հասունանում են: Հաղարջը հավաքում են 2—3 կիլոգրամ տարողության փոքր դամբյուղների մեջ: Հատապտուղներով լցված դամբյուղները՝ մինչև նկուղ տանելը պահում են ծառերի ստվերներում: Բերքը հավաքելուց հետո՝ տեղափոխում են սառը և շոք նկուղները: Մեծ տարածությունների վրա տեղափոխում կատարելիս՝ դամբյուղները կապում են հակերի մեջ, իրար միացնելով 4—6 հատը: Նախքան դամբյուղների իրար միացնելը, կիսատ դամբյուղները լրիվ լցնում են, որպեսզի տեղափոխումների ժամանակ ուժեղ ցնցումներ չկրեն, որից վնասվում են պտուղները և իջնում է նրանց որակը: Տեղական սպառման համար՝ հատապտուղները հավաքում են լրիվ հասունացման շրջանում, որոնք որակով ավելի բարձր և համեղ են լինում:

ՀԱՂԱՐՋԻ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԸ

Հաղարջի վնասատուները և հիվանդությունները բավական շատ են: Նրանք զգալի վնաս են պատճառում թփերի օպտիմալ աճեցողությանն ու բերքատվությանը: Վնասատուների և հիվանդությունների ազդեցությունից դանդաղում է թփերի աճը, բույսերը թուլանում են և ի վերջո շորանում: Վնասատուները անմիջական վնաս են հասցնում ծաղիկներին ու շվերին, իսկ հիվանդությունները գլխավորապես տարածվում են տերևների և թփերի վերերկրյա մասերի կեղևների վրա: Թե՛ հիվանդությունների և թե՛ վնասատուների դեմ կան պայքարի միջոցներ, բայց ամեն դեպքում էլ գերադասելի է պրոֆիլակտիկ միջոցների կիրառումը՝ նրանց վնասը կանխելու համար: Նրան ամենից առաջ կարելի է հասնել կարանտինի սահմանամբ և նախազգուշական միջոցների կիրառմամբ: Բոլոր տեսակի տնկանյութերը — թփերը և կտրոնները պետք է ըստ տանալ կարանտինից դերժ տնկարաններից: Ստացված տնկանյութը պետք է ենթարկել խիստ ստուգման: Պետք է ստուգել, որ տրնկանյութի վրա չլինեն լվիճներ, վնասատուների ձվեր, շվերի մեջ չլինեն ապակենման թրթուրներ և կեղևը շունենա անտրակնոզ սնկաչին հիվանդության հետքեր: Վարակ կրող և վնասված տնկանյութը պետք է խոտանել: Նախազգուշական միջոցառումների թվին են պատկանում նաև տնկարկների և տնկարանների հողամասի լավ խնամքը և մաքրությունը՝ ամեն անգամ հողամասից էա-

ված ճյուղերի հեռացումը և այրելը, աղբոսկոմպլեքսի լրիվ կիրառումը (միջշարքային տարածությունների խոր վարելը, սիստեմատիկ պարարտացումը, նախազգուշական քիմիական պայքարը վնասատուների ու հիվանդությունների դեմ և այլն):

Փարթամ աճեցողություն ունեցող բույսերը հեշտությամբ են տանում հիվանդությունները և ավելի են դիմանում վնասատուների հարձակմանը: Հաղարջի վրա մեծ մասամբ հանդիպում են հետևյալ վնասատուներն ու հիվանդությունները:

Հաղարջի գլատկան: Զլատկայի թրթուռը ձմեռում է միամյա շվի մեջ: Հունիսի վերջին նա ձևավորվում է որպես բզեզ, որը կրրծելով շիվը, անցք է բաց անում և դուրս գալիս: Սրանք կանաչ գույնի, բրոնզե փայլով բզեզներ են: Բզեզները երբ սնվում են տերևներով, այնքան էլ վտանգավոր չեն հաղարջի գոյության համար: Սակայն բզեզներն իրենց ձվերը դնում են միամյա կամ երկամյա շվերի վրա: Զվերից՝ որոնք ծածկված են նարնջագույն փահանիկով, 16 օրից հետո դուրս են գալիս թրթուռները, որոնք թափանցում են շվի կեղևից ներս և հասնում են մինչև միջուկը, ուր 20 սանտիմետր երկարության վրա և իրենց մարմնի հաստությամբ անցք են բաց անում: Ամբողջ միջուկը լցվում է թրթուռի կղկղանքով: Թրթուռը կրծելով ջրատար անոթները, խախտում է նրանց ամբողջականությունը, որից և շորանում են շվերը: Հաճախ շվերի 90 տոկոսը ոչնչանում է այդպիսի վնասումներից:

Պայքարի միջոցները: Վնասված շվերը գարնանը՝ էաման միջոցով հեռացնել և այրել: Բզեզները երևան գալիս՝ անհրաժեշտ է անցկացնել սրսկումներ 0,2 տոկոս կալցիում-արսենատի, 0,15 տոկոս փարիզյան կանաչի, 0,2 տոկոս մանգան-արսենատի լուծույթով: Սրսկումները կրկնել 5—6 օրից հետո, որը համընկնում է բզեզների մասսայական թռիչքի ժամանակին: Պայքարի քիմիական միջոցները տալիս են լավ արդյունքներ:

Հաղարջի ապակեման (стекляница) վնասատուն: Հունիս ամսին այս վնասատուի թիթեռը ձու է դնում հաղարջի բողբոջների հիմքում: Նրանից դուրս եկած թրթուռները թափանցում են կեղևով՝ միջուկի մեջ և այնտեղ ապրում ի հաշիվ միջուկի—վնասելով միամյա շվերի հյուսվածքները: Միամյա շվերը որոշ ժամանակից հետո շորանում են, իսկ 2—3 տարեկան ճյուղերը, որոնք երբեմն պահպանվում են՝ ուժեղ պտղաբերության տարիներին

բերքի ծանրությունից կոտրվում են (միջուկը վնասված լինելու պատճառով): 2—3 տարուց հետո՝ թուփը խիստ հյուծվում է, որից ուժեղ կերպով ընկնում է նրա բերքատվությունը:

Պայքարի միջոցը: Միակ կիրառելին այժմ էտումն է: Վնասված թփերն էտում են մինչև հողի մակերեսը և էտվածը այրում: Թփի մեջ բուխակներ չեն թողնում, քանի որ սրանք նորից կարող են թրթուռների համար պատասպարան ծառայել: Էտված շվերը անմիջապես այրում են:

Կոկրոշի սղոցողը (ПИЛИЛЬЩИК): Այս միջատը նման է սովորական ճանձին—միայն դեղին գույնի է: Վաղ գարնանը սրա էզը՝ երիտասարդ տերևների ջղերի վրա դնում է մինչև 65 հատ ձու: Մրանցից դուրս են գալիս թրթուռներ, որոնք սնվում են տերևաթիթեղով, այնպես որ վնասված տերևներից մնում են միայն ջղերը: Երկրորդ սերունդը դուրս է գալիս հուլիս ամսում. երբեմն առաջանում է նաև երրորդ սերունդը:

Պայքարի միջոցները: Թփերը սրսկում են 0,3 տոկոսանոց կալցիում արսենատով, կամ 0,2 տոկոսանոց փարիզյան կանաչի և հանգած կրի խառնուրդով, վերցնելով հանգած կիրը՝ կրկնապատիկ քանակությամբ:

ԼՎԻՃՆԵՐԸ (ТЛЯ)

Լվիճները վնասում են բույսին՝ նրա պատրաստի սննդանյութի հաշվին ապրելով: Նրանք մեծ մասամբ հանդիպում են բույսերի երիտասարդ մասերի վրա: Ապրում են նոր բացված բողբոջների և տերևների վրա, կամ աճող շվերի ծայրերում: Լվիճների ձվերը դասավորված են լինում շվերի ծայրերում կամ բողբոջների հիմքում: Չվերը դնում են աշնանը՝ բեղմնավորված էզ լվիճները: Լվիճները բազմանում են արագ, ձվից դուրս եկած թրթուրները բազմանում են անսեռ ճանապարհով: Երկրորդ սերունդում առաջանում են թևավոր էզ լվիճներ, որոնք թռչելով տեղափոխվում են այլ թփերի վրա ու շարունակում բազմանալ: Թևավոր էզ լվիճները բեղմնավորվում են աշնանը, որոնք ձվեր են դնում շվերի ծայրերի և բողբոջների հիմքում:

Պայքարի միջոցները: Թփերը գարնանը ընթացքում սրսկում են անաբազին սուլֆատով կամ նիկոտին սուլֆատով: Ամառը, երբ

վնասատուն անցել է տերևի տակի կողմը, վարակված սև հաղարջի ջվերի ծայրամասերը թրջում են հեղուկ օճառի լուծույթում (1 դուլին 400 գր) կամ նիկոտինի լուծույթում:

Հաղարջի ցեցը: Սրա հարսնյակները վաղ գարնանը վնասում են հաղարջի բացվող բողբոջներին: Ամռան սկզբին հարսնյակներից դուրս եկած թիթեռները ձվեր են դնում կանաչ հատապտուղի մաշկի վրա: Չվերից դուրս եկած թրթուրները սնվում են հատապտուղի մեջ եղած սերմերով և մինչ պտղի հասունացման սկիզբը դուրս են գալիս՝ պտղի վրա թողնելով փոքր անցք: Դուրս եկած թրթուրները ձևավորվում են հարսնյակի, և այս վիճակում ձմեռում թիթի հիմքի մոտ:

Պայֆարի միջոցը: Վաղ գարնանը, նախքան բողբոջների բացվելը, թիթերը սրսկում են անաբազին սուլֆատով (մեկ դուլլ ջրին 20 գրամ):

ՀԱՂԱՐՋԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անտրակնոզ (Антракноз): Այս հիվանդությունը վարակում է գլխավորապես տերևներին, որոնց վրա նշմարելի է դառնում գարնան սկզբին: Հունիս ամսում՝ տերևների վրա առաջանում են դորշ դուլնի մանր բծեր, որոնք մեծանալով միաձուլվում են. դրանից տերևները կուշ են գալիս, շորանում և թափվում են: Հիվանդությունը ուժեղ տարածվելիս բոլոր տերևները կարող են թափվել, թողնելով մերկ թիթեր: Նման պայմաններում ընկնում է բերքատվությունը: Պտուղների վրա հիվանդության տարածվելուց առաջանում են սև գույնի բծեր:

Պայֆարի միջոցը: Եռակի անգամ պետք է սրսկել մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով, որից առաջին անգամը՝ ծաղկելուց հետո, երկրորդ անգամը՝ առաջինից 10—15 օր հետո, իսկ երրորդ անգամը՝ բերքահավաքից հետո:

Հաղարջի ժանգը (Ржавчина смородины): Այս հիվանդության ժամանակ տերևների տակի երեսի վրա առաջանում են նարնջագույն բծեր, իսկ պտուղների վրա՝ գորշ գույնի բծեր: Ուժեղ վարակված տերևները շորանում և թափվում են, որից և ընկնում է բերքատվությունը:

Պայֆարի միջոցներն են՝ վնասված տերևների հավաքելն ու այրելը, աշնանը խոր վարը և հողը շուտ տալը. բորդոյան հեղու-

կով սրակելը (ինչպես անարակնոզի դեպքում): Կիրառում են նաև պրոֆիլակտիկ միջոցներ, գլխավորապես հեռու պահելով այն բույսերից, որոնց վրայից փարակը տարածվում է հաղարջի վրա, միաժամանակ անկարկը շպեռք է խտացնել և այն մուլտիստերից պետք է դերծ պահել:

Գորշ բծավորություն (Бурая пятнистость): Այս հիվանդության ժամանակ տերևների վրա առաջանում են գորշ գույնի կամ շագանակագույն բծեր, որոնց հետևանքով տերևները կարող են չորանալ և թափվել: Պտուղները և ճյուղերը տվյալ հիվանդությունից չեն վնասվում:

Պայֆարի միջոցը: Սրակում են մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով առաջին անգամը՝ մինչև բողբոջների արթնանալը, իսկ հետագա սրակումները կրկնում են 12—18 օր ընդմիջումներով: Ընդամենը սրակում են 3—4 անգամ:

ՀԱՂԱՐՋԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՆԵԱՎՈՐ ԹՈՒՅՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Բորդոյան հեղուկ: Բաց-կապույտ, երկնագույն հեղուկ է: Մեկ տոկոսանի բորդոյան հեղուկ պատրաստելու համար վերցնում են մեկ կիլոգրամ մաքուր պղնձարջասպր, նախ քիչ քանակի տաք ջրում բաց են անում, քամում և ապա խառնում 50 լիտր ջրի հետ, նույն քանակի մաքուր կիրը հանդցնում են առանձին փայտյա մեծանի մեջ (մետաղի ամանները՝ քիմիական միացությունն առաջացնելու համար չեն օգտագործվում) և լուծում դարձյալ 50 լիտր ջրի մեջ. այնուհետև պղնձարջասպի լուծույթը լցնում են հանդցրած կրի լուծույթի մեջ՝ վերջինս անընդհատ խառնելով: Սաացվում է բաց կապույտ գույնի—երկնագույն լուծույթ: Նաչած սրակման ժամկետներին՝ գործադրում են տարբեր խտության լուծույթներ, օրինակ՝ տերևների բացվելու սկզբին սրակում են ավելի թույլ լուծույթով (0,5 տոկոսանոց): Տերևների լրիվ զարգացման շրջանում՝ սրակում են մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկ:


Անաբազին սուլֆատ: Անաբազին սուլֆատը բուսական պրեպարատ է: Նրա մեջ որպես ալկալոիդ թույն՝ անաբազինն է: Անաբազին սուլֆատը պատրաստվում է Ղազախստանում տարածված անաբազիս բույսից: Վաճառքի համար նա արտադրվում է 35 տո-

կոս անաբաղինի պարունակությամբ: Սրանից պատրաստում են թե փոշիներ և թե լուծույթներ:

Անաբաղին սուլֆատի լուծույթը պատրաստվում է 0,15 տոկոս անաբաղին սուլֆատի և 0,4 տոկոս տնտեսական օձառի խառնուրդից՝ այլ կերպ ասած՝ 10 լիտր ջրին խառնել 15 գրամ անաբաղին սուլֆատ և 40 գրամ տնտեսական օձառ: Անաբաղին սուլֆատի լուծույթը ներգործում է ուժեղ, երբ պատրաստած լուծույթով անմիջապես սրսկում են: Անաբաղին սուլֆատը լավ է պահվում միայն հերմետիկ փակված ամանների մեջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՌԱՋԱԳՐՎՈՂ ՀԱՂԱՐՁԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հոլանդական կարմիր տեսակը: Թփերն ուղիղ շվերով են, բարձրությունը 1,2 մետր, ցրտադիմացկունությունը՝ 5 բալ: Պրտպաբերում է ամեն տարի, միջին բերքը մեկ թփից 1,2 կիլոգրամ է,



Նկ. 4


«Հոլանդական կարմիր» տեսակի ողկույզը և տերեր:

1948 թվին մեկ թփի բերքը հասել էր 4,8 կիլոգրամի, որը վերածած հեկտարի՝ կազմում է 16 տոննա: Հասած պտուղները 20 օրից ավելի պահպանվում են թփերի վրա: Գարնան ընթացքում առաջանում են 20—22 հատ փոխարինող շվեր: Ենթակա է հաղարջի ապակենման թրթուրի վնասվածքներին:

Պտուղների բիմիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք նյութեր՝ 16,65, ընդհանուր շաքարներ՝ 6, ընդհանուր թթուներ՝ 0,6, մոխիր՝ 0,55: «ց» վիտամինը՝ արտահայտված միլիգրամ տոկոսներով՝ 47,66:

Պատրաստված մուրաբան, որի մեջ շաքարի հարաբերությունը հում նյութին վերցված 1,5 : 1 ստացել է «5» բալ գնահատական:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 22-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 7-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի 9-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 12-ը:



Նկ 5

«Հովանդական սպիտակ» տեսակի ողկույզը և տերեր:

2. Հովանդական սպիտակ տեսակը: Թփերի բարձրությունը՝ 1,0—1,1 մետր, ցրտադիմացկունությունը՝ 5 բալ, միջին բերքը մեկ թփից՝ մեկ կիլոգրամ: Ամենաբարձր բերքը 1,8 կիլոգրամ է, մեկ հեկտարից ստացվում է մոտ 6 տոննա բերք: Թփերը վնասվում են հաղարջի ապակենման թրթուռի կողմից, պտղաբերությունը ամեն տարի է, մեկ թփի վրա տարվա ընթացքում առաջանում են 14—17 միամյա փոխարինող շվեր:

Պտուղների էմփիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք նյութերը՝ 18,25, ընդհանուր շաքարներ՝ 5,68, ընդհանուր թթուներ՝ 1,76, մոխիր՝ 0,65, «ց» վիտամին՝ 186,17 միլիգրամ տոկոս:

Պատրաստված մուրաբան, որի մեջ շաքարի հարաբերությունը հում նյութի հետ վերցված 1,5:1 ստացել է «4» բալ գնահատական:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճը սկսվում է ապրիլի 25-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 7-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի 9-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 25-ը:

3. Վիշնովայա տեսակը: Թփերը փուլած ձևի են (ոչ կանգուն) բերքի ծանրությունից՝ շվերը կռանում են մինչև դետին: Ցրտադիմացկունությունը՝ 5 բալ: Պտուղը բավական մեծ է, տրամագիծը՝ 1,1—1,2 սանտիմետր, մեկ թփի միջին բերքը 800 գրամ է, ամենամեծ բերքը՝ մեկ թփից 1,8 կիլոգրամ է, որը կազմում է հեկտարին մոտ 6 տոննա: Գարնան ընթացքում առաջանում են 17—19 հատ փոխարինող շվեր, որոնք բուկ տալուց հետո՝ բավական արագ արմատակալում են:

Պտուղների էմփիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք նյութերը՝ 17,5, ընդհանուր շաքարներ՝ 5,1, ընդհանուր թթուներ՝ 0,81, մոխիր՝ 0,8, «ց» վիտամին՝ 86,38 միլիգրամ տոկոս:


Պատրաստված մուրաբան—ստացել է «4» բալ գնահատական:

4. Կովկասյան տեսակը: Թփերն ուղիղ են, 1,3 մետր բարձրությամբ, բավական ամուր բնափայտով: Հաղարջի այս տեսակը ապակենման թրթուռի վնասվածքներին ենթակա չէ: Մեկ թփի վրա՝ գարնան ընթացքում առաջանում են 18—20 փոխարինող շվեր:

Պտուղները միջին մեծության են, ունեն 0,9—1 սանտիմետր տրամագիծ, մեկ թփից ստացվում է միջին հաշվով մինչև 0,6 կիլոգրամ բերք: Ամենաբարձր բերքը 1,4 կիլոգրամ է, որը հեկտարի հաշվով կազմում է 4,66 տոննա:

Պտուղների էմփիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք

նյութեր՝ 20,82, ընդհանուր շաքարներ՝ 6,94, ընդհանուր թթուներ՝
 2,83, «ց» վիտամինը՝ արտահայտված միլիգրամ-տոկոսներով
 հավասար է 95,82-ի:



Նկ. 6

«Վիշնովայա» տեսակի ողկույզը և տերեր:

Պատրաստված մուրաբան. ստացել է «5» բալ գնահատական:
 Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճեցողության սկիզբը՝ ապրիլի
 20-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 3-ից, հասունացումը՝ հուլիսի
 10-ից, աճեցողության վերջը մինչև նոյեմբերի 21-ը:

5. Հոլանդական վարդագույն տեսակը: Թփերը ցածր են՝ 0,7
 մետր բարձրությամբ: Ցրտադիմացկունությունը «5» բալ, մեկ թփի
 միջին բերքը 0,6 կիլոգրամ, ամենաբարձր բերքը՝ 1,1 կիլոգրամ է,
 որը մեկ հեկտարի համար կազմում 3,66 տոննա: Պտուղները բա-
 վական մեծ են՝ 1—1,2 սանտիմետր տրամագծով, բաց վարդա-

գույն. Թփի վրա՝ գարնան ընթացքում առաջանում են 13—15 հատ միամյա փոխարինող շվեր:

Պտուղների բիմիական բաղադրությունը տոկոսներով՝ չոր նյութեր՝ 19,54, ընդհանուր շաքարներ՝ 7,83, ընդհանուր թթուներ՝ 1,78, մոխիրը՝ 0,78 տոկոս:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 22-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 7-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի 11-ից: Պտուղները հասած միճակում պահպանվում են թփերի վրա 12—15 օր: Աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 18-ը:

6. Բար-Լե-Ռյուկ տեսակը: Թփերն ուղիղ են՝ 1,3 մետր բարձրությամբ: Յրտադիմացկունությունը «5» բալ, մեկ թփի միջին բերքը 0,4 կիլոգրամ է: Ամենաբարձր բերքը՝ 1,1 կիլոգրամ է, որը մեկ հեկտարի համար կազմում է 3,66 տոննա: Պտուղները միջակ մեծության են՝ 0,8—1 սանտիմետր տրամագծով: Ողկույզի մեջ պտուղների թիվը հասնում է 18—20 հատի: Թփի վրա՝ գարնան ընթացքում առաջանում են 18—20 հատ միամյա փոխարինող շվեր:

Պտուղների բիմիական բաղադրությունը տոկոսներով՝ չոր նյութեր 13,3, ընդհանուր շաքարներ՝ 6,7, թթուները՝ 1,2, մոխիրը՝ 0,64:

Մուրաբան ստացել է «4,5» բալ զնահատական:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 9-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 6-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի 14-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 18-ը: Մեր պայմաններում առանձնահատուկ տեղ են գրավում հաղարջի երկու այլատեսակներ, որոնց ստացել է Ի. Վ. Միշուրինը՝ սերմերի ցանքովից: Դրանք կրոնդալի սև և սպիտակույն պտուղներով հաղարջներն են:

7. Սև գույնի պտուղներով կրոնդալ: Մրա թփերը լինում են 1,5—1,7 մետր բարձրությամբ, ուղիղ ճյուղերով, որոնց վրա գառավորված են պտղաբերող միամյա և երկամյա շվերը:

Պտղաբերությունն առատ է: Պտուղները մուգ դիմեզույն են, մեկ պտղի քաշը 1,5—2,2 գրամ է: Մեկ թփից ստացվում է միջին հաշվով 1,2 կիլոգրամ բերք: Առանձին թփերից ստացվում է 5,15 կիլոգրամ բերք, որը մեկ հեկտարի հաշվով կազմում է 17,16 տոննա: Յուրաքանչյուր թփի վրա առաջանում են 18—20 հատ փոխարինող

բինող շվեր: Այս տեսակին ապակենման թրթուր չի վնասում: Այս տեսակի հաղարջը հեշտությամբ բազմանում է կտրոններով:

Պտուղների բնիական բաղադրությունը տոկոսներով՝ շոր նյութեր՝ 18,31, բնդհանուր շաքարներ՝ 10,13, թթուներ՝ 1,88, մոխիր՝ 0,8: Պտուղներն օդատարր լինում են թարմ վիճակում, պիտանի են նաև վերամշակման համար: Նրանցից պատրաստված շեմր (շաքարի և հում նյութի 1:1 հարաբերությամբ) ստացել է «3,5» բալ գնահատական:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 9-ից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 10-ից, հասունացման սկիզբը՝ հունիսի 1-ից: Հասած պտուղները թփերի վրա պահպանվում են 20—25 օր: Աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 16-ը:

8. Ոսկեգույն պտուղներով կրոնդալ: Սրա թփերի բարձրությունը 1,8—2 մետր է: Սրանք արտաքինով շատ նման են սև պտուղների տվող կրոնդալին: Շվերը շեն վնասվում հաղարջի ապակենման թրթուրի կողմից: Հասունանալուց՝ երկար ժամանակ պտուղները պահպանվում են թփերի վրա առանց թափվելու: Ցրրատաղիմացկունությունը «5» բալ է: Կտրոններով բազմանում են հեշտությամբ:

Պտուղները — ոսկեգույն են, էլիսպսածե, 1,5—2,5 սանտիմետր երկարությամբ, մաշկը հաստ է, հասունանալուց հետո չի ճաքճրում: Այս հատկությունն ունեն նաև կրոնդալի մնացած տեսակները: Ունի քաղցրաթթու համ — նուրբ բուրմոնքով, մեկ թփից միջին հաշվով ստացվում է 0,8 կիլոգրամ բերք: Ամենամեծ բերքը՝ մեկ թփից 3 կիլոգրամ է, որը հեկտարի հաշվով կազմում է մոտ 10 տոննա:


Պտուղների բնիական բաղադրությունը տոկոսներով՝ շոր նյութեր՝ 31,4, բնդհանուր շաքարներ՝ 14,12, թթուներ՝ 1,13, մոխիր՝ 0,8:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի վերջից, ծաղկման սկիզբը՝ մայիսի 10-ից, հասունացման սկիզբը՝ հունիսի 29-ից. պտուղները հասունանալուց հետո թփերի վրա կարող են պահպանվել 20—28 օր:

ՀԱՂԱՐՁԻ ՍԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Կիա պլոդորոդնայա տեսակը: Թփերն ունեն ուղիղ շվեր՝ 1,5 մետր բարձրությամբ. ցրտադիմացկունությունը «5» բալ է. դառնան ընթացքում առաջանում են 25—30 շվեր: Բազմամուս են կտրոններով: Հաղարջի այս տեսակին ապակենման թրթուռը վնասում է ուժեղ կերպով:

Պտուղները միջակ մեծության են, նրանց տրամագիծը՝ 1—1,2 սանտիմետր է, մեկ թփից միջին հաշվով ստացվում է 0,4 կիլոգրամ բերք: Ամենամեծ բերքը՝ 0,8 կիլոգրամ է, որը հեկտարին կազմում է 2,66 տոննա:



Նկ. 7

«Կիա պլոդորոդնայա» տեսակի ողկույզը և տերեր:

Պտուղների բիմիական բաղադրությունը տոկոսներով՝ շաքար՝ 18,96, ընդհանուր շաքարներ՝ 6,38, ընդհանուր թթուներ՝ 2,4, մոխիրը՝ 0,1, «ց» վիտամինը՝ 163,83 միլիգրամ-տոկոս:

Պատրաստված մուրաբան ստացել է «4,5» բալ գնահատա-
կան:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 9-ից,
ծաղկման սկիզբը՝ մայիսի 14-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի
1-ից, պտուղները հասած վիճակում մնում են թփերի վրա 20—25
օր, աճեցողության վերջը՝ մինչև նոյեմբերի 17-ը:

2. Ացիդեն-Բլաֆ տեսակը: Թփերը լինում են ուղիղ կանգնած
շվերով՝ 1 մետր բարձրությամբ. ցրտադիմացկունությունը՝ «5»
բալ: Գարնան ընթացքում առաջանում են 10—12 միամյա շվեր:
Հաղարջի ապակենման թրթուռը վնասում է ուժեղ կերպով, որը
սրա բերքի պակասեցման հիմնական պատճառն է:

Կտրոնները արմատակալում են հեշտությամբ:

Պտուղները միջին մեծության են, տրամագիծը 0,9—1,2 սան-
տիմետր է, պտղի քաշը մոտ մեկ գրամ է, առանց յուրահատուկ
արոմատի: Մեկ թփից ստացվում է 0,3 կիլոգրամ բերք, որը մեկ
հեկտարի վրա կազմում է մեկ տոննա:

Պտուղների էմիսիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք
նյութեր՝ 15,9, շաքարներ՝ 6,22, թթուներ՝ 2,6:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ մայիսի 10-ից,
հասունացման սկիզբը՝ հուլիսի 5-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմ-
բերի 10-ը:


3. Լակրոմալիս տեսակը: Թփերն ունեն ուղիղ շվեր, ցրտա-
դիմացկանությունը «5» բալ. գարնան ընթացքում յուրաքանչյուր
թփի վրա առաջանում են 16—18 միամյա շվեր: Բազմանում են
կտրոններով, որոնք հեշտությամբ արմատակալում են:

Պտուղները մեծ են՝ 0,9 սանտիմետր տրամագծով, առանց
յուրահատուկ հոտի, որը բնորոշ է սև հաղարջների համար: Միջին
բերքը մեկ թփից՝ 0,4 կիլոգրամ է, որը մեկ հեկտարի հաշվով
կազմում է 1,33 տոննա: Հաղարջի ապակենման թրթուռը մեծ վր-
նաս է հասցնում, որից սրա բերքատվությունը ընկնում է:

Պտուղների էմիսիական բաղադրությունը տոկոսներով՝ շոք
նյութեր՝ 16,95, ընդհանուր շաքարներ՝ 6,56, ընդհանուր թթուներ՝
0,55:

Պատրաստված մուրաբան ստացել է «5» բալ գնահատական:

Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 15-ից,



Նկ. 8.

«Էակրումայիս» տեսակի ողկույզը և տերեր:

Ժաղկման սկիզբը՝ մայիսի 10-ից, պտուղները հասունանում են հուլիսի 5-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 17-ը:

4. Նուաբ Գիկսոն տեսակը: Թփերն ոմնհն ուղիղ կանգնած շվեր, 1,2—1,3 մետր բարձրությամբ: Յրտաղիմացկունություներ՝ «5» բալ: Ըստ համի՝ տարբերվում է վերևում թված տեսակներից՝ իր նուրբ բուրմունքով և համով (շնորհիվ շաքարների և թթուների ներդաշնակ քանակի առկայության): Թփի վրա՝ դարձնան ընթացքում առաջանում են 14—18 միամյա շվեր: Կտրոնները արմատակալում են հեշտությամբ:

Պտուղները մեծ են, նրանց տրամագիծը հասնում է 1,1—2 սանտիմետրի:

Պատուների էմիսիան բաղադրությունը տոկոսներով չորս
նյութեր՝ 14,9, շաքարներ՝ 7,65, թթուներ՝ 0,12:

Պատրաստված մուրաբան ստացել է «4» բալ գնահատական:
Տվյալ տեսակի ֆենոլոգիան: Աճման սկիզբը՝ ապրիլի 15-ից,
ծաղկման սկիզբը՝ մայիսի 13-ից, հասունացման սկիզբը՝ հուլիսի
5-ից, աճման վերջը՝ մինչև նոյեմբերի 18-ը:



Վ Ի Ե Պ Ա Կ

Էջ	Տող	Տեղված է	Պեժ է լինի
3	11 Ն	ազդուժ էն	ազդուժ է
5	17 Ն	K—80	K ₂ O—80

ԱՆ

ՎՅ 04862

Պատվեր N 816

Տիրում 1500

Հանձնված է արտադրության 21/X 1949 թ.:

Ստորադրված է տպագրության 13/XII 1949 թ.:

Տպադրական 2,3/8 մամուլ

Հայպոլիգրաֆհրատի N 2 տպարան, Կոմունյանցի փող. N 86,
Երևան, 1949 թ.:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008445

№ 1 в. 50 409.

$\frac{A}{18674}$